

ԳՐԱԿԱՆ

ԳՐԱՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆ, ԹԷ... ԳՐԱՆՏԻՈՒԹԻՒՆ

...Ինչո՞ւ... ոչ թէ քննադատութիւն, այլ պատասխանատութիւն։ Որովհետեւ քննադատութիւնը գիտական կատեգորիա է, որին նուահասու չէ պատեհապաշտը, ուրիշի թիվունքում պատսպարուածը, գրական դիւնապէտը, որ ոչինչ չանելով՝ միշտ... քննադատ է։ Թամբից չիջնող այս տեսակը զարմանալի աւերածութիւններ է անուն, բայց՝ աննկատ, և զարմանալիօրեն աննակինստանակն է պաօր։ Իսկ պատասխանատութեան հարցը...։ Ահա պատեղ է, որ նա մեծ վարպէտ է, խօսում է «մեծանանութեան» անոնից, համոզուած, որ իր տերերը կը պաշտպանեն իրեն։ Ճշնարսութիւնն ի՞նչ է որ, դրա պատրանքն էլ կը առեղծն... բանավիճել փորձողն էլ թող լոի, եթե ուզու է....

Ժողովողն ասում է սակայն... «Ամէն բանի ժամանակը կայ... բանդելոյ ժամանակը և շինելոյ ժամանակը... բարեր հաստելոյ ժամանակը և տուն շինելոյ ժամանակը...» (աշխարհաբար թարգմ. Արշավորյան, «Աստղիկ», 1990, էջ 5-6)։ Բայց ասացու ածքն էլ լրացնում է՝ «Վկուն իր բոյնը չի փոխուած»։ Ուրեմն՝ այս տեսակը միշտ ոնի իր ժամանակը ժամանակի մէջ մշտաքնակ է է, եթէ անզամ իր բոյնը նեխմէլ է վաղուց...։ Նա ինչ էլ անի, երեսանց լրատանց իրեշտուակ է երեսուն, ներսից համոզուած է, որ իր գոյութեան յիշեցումը՝ սկանդալների մէջ խաղարարու լինեն է։ Այլ էր վերջերս... համագումարեան բեմուն¹ այս տեսակը յացնուեց շաղցամը բաշոյ մինիկի դերում, որի համար հասուցում է ուզու։ Ու զիստես, որտե՞ղ է հաւատը զերիշխուան, սկսքունքը՝ լրացնուան։

Նախահամագումարեան բառուում Մեծին² թիկու նոր էր խաղում, թէեւ գիտեր, որ դրանով նրան սանելանելիութեան պատին է սեղմուն։ Փոխանո՞ր էր, հաշուարար, գրական մամուլը պահում էր կողագերի տակ, մանրադիտակո՞վ, ասես շերսպիրեան Յորիկի «տեսողութեամբ» մաղում, որ չապրդի ն յանկարծ յօդուածներ մամուլում և քննադատին փոխանորդի իրենց խաղաղութեանը։ Ո՞ղջ երկիրն էր բառուում, բայց այս տեսակը իր անտեսանելի «խաղաղութեան» ցնծութեան մը էր յիշորսուան...։ Եղան նաև այսպէս։ Զարենցի հարիւրամեակին հրապարակումների թիւը շատ էր։ Փոխանորդը մասնակի՞ց եղան տօնախմբութեանը³... և հասկացաւ, ընկել է

¹ Խօսքը ՀԳՄ վերջին համագումարի մասին է, որ տեղի ունեցաւ 2001 թ. գարնանը, Երեսանուում

² Խօսքը մեծանուն գրող Հրանտ Մաթեոսեանի մասին է, որ ՀԳՄ նախագահն էր մինչ 2001 թուականը։

³ «Փոխանորդ» «մակամունք» ծնուել է այս անձի՝ Ֆելիքս Մելյեանի վարած պաշտօնների փոխաձևումից։ Նա խմբագիրն էր «Գրական թերթի» թերթաւ հովանաորութեամբ, այսուհետեւ «ընտրուել էր» ՀԳՄ նախագահի տեղակալ... և այլն։

⁴ 1999 թ. «Գրական թերթուան (հ. 5, 1-15 մարտի) Ֆ. Մելյեանը հրապարակեց «Համատարած Զարենց» յօդուածը՝ գրողի 100-ամեակին նուիրուած, ուր կրկն փորձ էր արուս Զարենցի «Դանքեական առասպեկտ» և «Երկիր Նայիրին» վերլուծել նախորդ տանամեակների ողով։ Վերոնշեալ յօդուածին իբրեւ պատասխան գրուեց իմ «Զարենցամորութեան արմոն՝ ընդդիմ Զարենցի» յօդուածը, որը ծանր ողիսական ունեցաւ և կանխուեց դրա հրապարակուանը Զարենցի 100-ամեակի օրերին...։

թակարով: Մինչ այդ մամրադիտակով տեսանողը⁵ չարենցագիտութեան սորումվ գծել էր մի նշանող, և այդ արարոր նման էր նախորդ ասեակների ցնծութեանը (Գեղրգ Էմինը կ'ասէր՝ «համարե՞ղ ո հնո՞ւ ըեմադրուած ներկայացման»): Ո՞չ մի նոր հարց, տեսակէ՞ւ, հայեա՞ցք. եղածն էլ պէտք է ընադատուէր: Խաղն այնքան նու որ էր իր հիւսուած, փոխանորդը խմբագիրն էր միաժամանակ պատկառելի մի աշխատութեան⁶, որը չարենցագիտութեան մի նոր հանգրուած ան, եթէ չասենք՝ հիմնաքար էր նախանչում: Միսս կողմից՝ ո՞չ մի չարենցագիտութիւն, «արրաջրէ՞լ էր» պէտք բոլոր աշխատութիւնները՝ պահպանելու հին տեսակէնները, իր թիմին հարազատը՝ բոլշէիկեան նը: Նա իր «տեսողութեամբ» պացիֆիատական երանգներ էր յաւելում «Դանթեական առասպելուած», միայն ապազգային ծաղր տեսնում «Երկիր Նայիրիուած»: «Գինովցած տօնախամբութեան մէջ» (փոխանորդի արտայալութիւնն է) գեղեցկախօսում ն էր... թէ իբր տեսէ են Չարենցի տողում սահմանապանը, ողբերգականը-պատմականը-ապօպայինը, ապինը՝ իրական Չարենցին, որ վախեցնում էր փոխանորդին, Յորիկի զանգութեղային «տեսողութիւնը» լարում ու զուտ նայիրեան էր: Եթ ո՞վ պարմանք, եղաւ այսպէս պատասխան յօդուածը, որ ծնուել է ինքնաքրուիս, պէտք է պատասխանելու այդ հարցերին, կանխու է ց, բամի որ կը իսանզարել փոխանորդի խաղաղութիւնը, թէեւ չիրապարակուած էլ նոյնքան ընթերցող ունեցաւ՝ յարուցելով փոխանորդի պայուղըն ու ոփր...:

Ահա՝ մեր այս կերպարը միամիտ իր ուղեղով կանգուն է, ուեռ ընադատ է... և գրբէ՞ր է երաշխառուում՝ տպագրելու, այն էլ՝ երկրի Առաջինի⁷ ֆոնդից...: Եթ մէկ էլ, հովանառուչական իր առարելութեամբ կարծիքն է՞ յայունում, թէեւ ուշացած, արդէն երապարակուածների, ընադատութեան, գրականագիտական ընթացի մասին, այն էլ՝ Ժողովովի խորիդաւոր հայեացրու՞վ...: Ու իր թիմին դուր չի զախս կրկին բարող, արդիականը... դրանց շարքում՝ 90-ականների արձակը (թէեւ այդ մասին լուս ն է, ուրիշի խօսքելն է մշշրելուն), այդ ընթացքում, Վարուժան Այստ ավեանը՝ իր պատմուածներով ու վերջին՝ «Ճանճի ամիսը» վեպով: Ժանճանակին, եթէ փոխանորդի առարելութիւնը իրեն չերապահելին, ինչը նոյնպէս կը իր ընադատէր Հ. Մաթեառուանի «Տաշքենդը»՝ լեկուի, կառուցուածքային նորայալութեան համար (անզամ Մաթեառուանի արձակի համակարգուած), ու ո մնաց, 90-ականների արձակի ոչ-ֆարուային այնպիսի կառուցուածքը, որ գոյաւորում է Վ. Այստ ավեանի արձակի փիլիտփայական-գեղագիտական համակարգը, նշանակութեան և ինստատի բարդ-գեղագիտական ընդհանրութիւնների վերաճում Լ. Խեցոյեանի արձակում, Խափանցում Ռ. Շահապետեանի կերպարի միայնակութեան և ներքին միասնութեան ողբու և այն: Մի խօսքով՝ պարզը, ոչ ածանցաւորը, ֆարուայինը, մոտահասու է ընադատի այս տեսակին ու նրա շահագրգութիւնները չեն անցնում սրա սահմանից...:

⁵ «Մամրադիտակով տեսանողը» անձի սառան փոխաքերութիւն է: Մրա կերպարը այդ տարիներին «Գրական թերթ» խմբագիրն էր, և ամսութերին խոշորացոց պատկիներ էր կրում:

⁶ Տե՛ս Ալմաստ Զարարեան «Եղիշէ Չարենց, Գրուական կենսագրութիւն» (Ե. 1999թ.) հատորը: Եղագականի խմբագիր, եթէ պրոտասխանառու չէ, գոնէ համախուակից է իր խմբագրած հեղինակին: Բայց այս պարագայում այսպէս չէ: Խմբագիրը (Մելոյեանը) նշուած է միայն ի պաշտօննելու...:

⁷ Ֆ. Մելոյեանի երաշխառութեամբ երիտասարդ հեղինակների գրեր են երապարակուում՝ ֆինանսառութելով երկրի նախապահի ֆոնդից:

Բայց ինչու՝ «Տաշրենդը»: Որովհետեւ այս վիպակը ոչ միայն Մաթեոսունամի, այլև 60-80-ականների հայ արձակի ամենափնտառիպ և նորագործական գործն էր՝ լեզուանուածողութեան, կերպարի կերտունան, բարյ կառուցուածքի և նրա բարմաշերտութեան (եթէ, կ'ովէք՝ բարմածայնութեան) առունու: 90-ականների արձակը Մաթեոսունամի լեզուանուածողութեան, ժանրի այսպիսի բարյ կերտունան, նաև՝ Վ. Այր ավեանի կերպարի միասնութեան և տրոհման առանցքում է վերածում (այլ խօսքով՝ կերպափոխուում) նորագոյն հայ արձակի: Լեզուանուածողութեան առունու, կարելի է ասել, այն, իր գլխաւոր մի ուղղութեամբ, ինչպիսին Վ. Այր ավեանի արձակն է, ներքին միասնութեամբ ծագում է Մաթեոսունամի, նաև՝ գլխաւորապէս «Տաշրենդի» լեզուափիլիստիայական առանցքից, որ կրում է պատկերահանակարգապին մի այլ՝ այս ավեանական կեցութիւն: Այն առընչում է՝ գրողի (Այր ավեանի) լեզուի ներքին կերպարունան և արտաքին վերաբերութեան փիլիստիայական վերլուծութեամբ, որը հնարաւոր չէ առանց նորագոյն գեղագիտական դպրոցների իմացութեան, ինտելեկտուալ նորագոյն դպրոցների վիճանոցի և բառապաշտի, նաև՝ համակարգի, որից այդքան խոսափում են այն ջրիկ բաղդրաբաօսները, որոնք «հանճարել» և «մարգարել» տերմինների գոնե որեւէ ընտրուում չեն պատկերացնում: Եւ, եթէ, ասում են Չարենցի ու Սեւակի անոնների կողքին անզան, ապա առնու այն դրամը սուկական որոշիչներ են դառնում, որոնք վիրաւորական են ինչում տուեալ մեմբարանութիւններում...:

Ո՞րն է բուն ինդիբը, «Ճանաչել վիմասութիւն», իսկ մեր նամկարակու փոխանորդը ինչպէս հասկանայ այս դէպրում, որ բարի նախահիմքին ձգույթ այս ավեանական արձակի կերպարը ասոյթի կառուցուածքում վարկածն է տեղադրում: Փիլիստիայօրին այս կերպարը գոյարանական հարցադրում է, անում և «Ճանաչ ամիսը» և «Հին ահ» գործիքի պատուածքում մրցներում, վիպակում և վէպում: Խնդիրն այն է, սակայն, որ գոյարանական այս հարցադրումը մը անհատի ողբերգականութեան ո՞չ հոգերանական, այլ «որուածութեան» հասկացութեան վերլուծութեան պարուադրանքին է, մղում: Հևուարար, լեզուն, որ անհատի նուավարի միակ առանցքն է, համզում է, կերպարի (որուածի և կեցութեան ընմութեան և լեզուի (կեցութեան և անդրկեցութեան միասնութիւն)} միջոցով գոյութեան փաստարեմեր որոնուզ բանականութեան նաև «բանականութեան հոսքի»), լինելութեան և կմնաապում մի միջակ: Անհատի ողբերգականութեան մղումը այս ավեանական ֆինունին-կերպարին հաղորդում է մշակոյթը (բարդացութեամբ), ուստի մի ճանապարի է, մնում: Կեցութեան անաւարտութեան մէջ (այն արտայացուում է, նաև վ.այի և պատուածքների ոչ-ֆաբրուային «սխմելում», ասացինք՝ պատուածքի մարկածի ընմութիւնն է) տարրածուել ասոյթը, որովհետեւ միակ առարկայականը «յայտնին է», որ իր մէջ պահպանում է նաև անյայլը-անվերջը-ուշարացին մնացորդը-պատմականը և այլն: Ես ամբողջութեամբ ինդիբը չեմ ընդունի միայն ասեմ, որ սրա մասին գրել եմ վաղուց):

Գրաքնադասութիւնը, առհասարակ, ինքն էլ պիտու է ընթանայ այս «բարդացումների» ճանապարհով, որ վերարժեքաւորման, նորագոյն գրական ընթացքի ճիշդ ընթոնման ո զնահասութեան հարցեր առաջարի: Այլ բան է, որ մասուլը պատրաստ չէ դեռ կամ մասնագիտական համայնքները, որոնք կոչուած են դրան ծառայելու, ընթանում են հեշտի, դիրքորոշութեանների, ճանապարհով, որովհետեւ այն առաջնորդում է «Փիլիստիբը», այլ խօսքով՝ պատեհապաշտը:

Ճշմարիտ գրականագիտութիւնը մերժելի է նրանց համար ինչպէս լեզուի, այնպէս էլ լեզուի գիտականութեան առումով։ Ուստի այսուղի, որ իշխում է գիտական «վարժապետիպմը» (Յ. Օշականի տեղինն է) իր մի քանի շերտերով (գիտահանդանաշելի եւ ճառային մեկնաբանութիւններով և ինացականութեամբ), խոչընդուռում է նորի ձիշու ընթերցմանը, եւ նոյնքան աւերածութիւններ է սփոռում, որ մոխիրների տակ պէտք է փնտրել կայծը՝ վերարթնացնելու նորագոյն շարժումը նաև ընսադատութեան մէջ։ Եւ պատսիհական չէ. Վերարժեքաւորման ամէն մի փորձ, որ դիւրընթեռնելի չէ կամ «հոգ» է պատճառում՝ գոնէ կարդային մոտածելու այդ մասին, վերլուծելու իր համար «յայտնին» (ամպայի մասին չեն խօսում), նաև՝ հաղորդուի նորագոյն (գոնէ մեւ կ համար) վերլուծական մեթոդներին, փոխանորդը եւ իր արրանեալը՝ Յորիկի հմաստուն-խորհրդաւոր «լոռութեամբ», մէկմէկու ձայն տպով, խօսում են, բանքաստում են, սպառնում են են... ճանապարհ փակելու յոխորտանրով (իրենց հայրերի մեթոդը չեն մոռացել)։ Փակ ու փականիք տակ պահելը, ահա, արդարացնում է սրանց գոյութիւնը, կշիռ ունենալու պատրանք առեղծում նրանց համար գրական միջավայրում...։ Եւ քանի տարի, թերեւս, 90-ականների արձակը, այդ համակարգում՝ Վ. Այուավեանի «Ճանճի ամիսը» գրի յայտնութիւնը, փոխանորդի բարեհաճութեամբ, իր նմանների հակուրութեան պատճառով, որ նմանոցից այնկողը չի անցնում, զգուշորեն «հետապնդում են», տնտեղում այլ կարծիքներ, հետաքրրդութիւնից մղուած (խորանա նկ ձեւ է) ընթերցում հասուկելան գրուածքներ (կարելի է յիշել Գր. Յակոբեանի եւ ին յոդուածները այդ մասին մասուլում, նաև՝ իմ մի քանի անդրադարձները), սպառնում են «մեծամասնութեան» կարծիքն, տեսնելու, թէ որուեցից կը փչի քամին. թերեւս այդ ժամանակ կը շրջուեն՝ տէ՞ ու կանգնելու, ինչպէս կարողացան նոյնը անել նախորդ տարիններին։ Մեծի փոխանորդը, սուս հաւատաբիր ձեւ անսպառ։

Պարոնա՝ յը, անցել է այդ ժամանակը եւ թերեւս եկել է վերլուծութեան ժամանակը (Ժողովոյն ասում է՝ «ոուն շինելու ժամանակը»), քարը տաշուած է վաղոց եւ շինութեան մէջ «քարի ժամանակը» դարձել է լինելութեան-կառուցումի ժամանակ)։ Լոռութեան կամ խեղաթիւրելու «ձիրը», որ վիճակուած է կրել Ս. Յովիանիսանի «Բնքը» վեպը, Լ. Խեցյանի մասին տարտղուած է վարժապետական հանգերգութիւնը, Վ. Թանարեանի, Ի. Ճինապաշեանի, Վ. Պերպէրեանի, Ռ. Նսիապետեանի ու Գ. Խանջյանի արձակի մասին նաև ութեան բարդոյթը, առաւելապէս՝ Վ. Այուավեանի լեզուի «քար» կառոյցի մասին պարզ-ֆարուխին ըննադատութեան այս ֆենոմենը սպառել է իրեն, ել չեմ ասում արդէն նախորդ տասնամսների «դասումների» մասին, որոնք չեն յաղթահարել-թափանցել Հ. Մաթեոսւեանի, Ս. Այուավեանի, Ռ. Յովիափեանի, Ս. Գալշոյեանի, Զ. Խալափեանի արձակի պատճագրական շերտերը, ուստի բաց է մսում պատճականութիւնների մի վիժիարի շերտի ըննութեան պրոբլեմը ներառեալ նաև Սփիտրի գրականութիւնը, 70-80-ականների հայ բանաստեղծութիւնը)։

... Պարոնա՝ յը, ահա թէ ինչու ես էլ այսքան պարս եմ ասում, հանգերգի նման, թերեւս ձեր բառապաշարով. գրախօսութեան ժամը՝ թերթոնային-գովազդային-մամուլային իր նրբեանաներով, ինքնակործանում ու է այլեւս ու ժամանակը է յօդուածի, պրոբլեմային յօդուածի, եթէ կուվեր՝ հերմենուտիկայի, տերսուի լուծարման, էսթետիկական ընթերցման դարաշրջան է, պարոնա՝ յը: Այսպէս... մինչեւ փոխանորդը ընսադատում էր մեզ, պատճառաբանելով, որ ինը չի տարբերում «երեւոյթի» եւ «երեւութարանութեան», «համակարգի» եւ «միասնութեան», «տարբերութեան» եւ «տարնամասնութեան» եսթերի

իմաստային և գեղագիտական, ճանաչողական արժեքների սահմանը: Անհասկանալի՝ է իր համար այս ընթացքը: Իսկ արդինքում ոչինչ չունենալով, ոնայն ճանապարհ է երեաի, իսկ Վ. Այտավեանն էլ խրուել է կոկորդում, չի՝

թողնում իրեն ապրել ու վայելել նոր խմբագրափոխանորդի փառքը⁸: Քանի ուղեղի իր փորդիկ շահագրգռութիւնները չեն թողնի ընել, ըննադատութեան այսպիսի վարքն էլ կը ատիաի իրեն... մոտածել (այս էլ իրեն անցայտ բաների մասին): Այս թեկ փորձանքը (ոտք ու ողորմեաւ):

... Ոչինչ, սակայն, առում եմ, սա դեռ կղերականութեան (իր տիպի) ունայնամութեան վերջին սահմանը չէ: Եղել է արդէն, կա՛, բայց մշակոյթը դեռևս սրա նաևնի համար փաստ չէ, եթէ «հեղինակութեան» կնիք չունի: Այլ խօսքով՝ միայնակ ծառը անսոս չէ (մի Վ. Այտավեան է, ի ՞նչ կայ, չի նկատի կամ ըննադատ է՝ բամբասանքի մեջ կը թաղէ ն, թող մասն իր գրոցներում «Տաշրէնդն» էլ, «Ճանճի ամիսան էլ, միւսներն էլ...»): Եւ ի ՞նչ կը լինի... կը լինի, որ առանց մշակութային ճանաչողութեան ո՛չ նորը կ'ունենանք, ո՛չ դասականը: Այդ ամայութեան մեջ կը խամրեն մեր ճիզերը, աւանդոյթը կը կղփիանայ եւ, եթէ դեռևս ծնուեն միայնակները, ապա կարող է շայտնուն «Տաշրէնդի», «Խնկի ծառերի» կամ «Ճանճի ամիսի» ծիրում: Ուստի մշակոյթը ներքին-հոգեւոր դիմառնութեամբ պիշտ է ատեղծոմի (գրականութիւնը միայնակ է, «Ճանճի ամիսը» միայնակ է, եթէ մշակոյթին չի դիմառնում), որ մեր լեզուի «սունը շինուի», կրկին «քարը տաշուի», կրկին, եթէ Ժիսուս է՝ ապա հաստատելու, մշակոյթը ու մշակոյթի ժամանակ արարելու:

... Ասեմ նաեւ, ես ուսում էի, ճշմարիտ եմ ասում, ուսում էի խօսել միայնակի, մշակոյթի մասին, բայց ես միայնակ չէի...: Գիտեմ, շանքն այս չի աւարտուի և կ'ելնես դու, կ'ելնես իբրեւ նայիրեան «անառակ որդի»: Ո՛չ, երեաի իբրեւ «Երկու Այար» (... Մէկը խմբագիր, մէկը խմբապետ // Սարկաւազը մէկ շարական ասա // Իսկ խմբագիրը շարդեց ու թափեց... (Զարենց)): Բայց, գիտեմ, որ նա «ճանաչեց ինձ իմ ճանկերից», ես նրան գիտեմ իր «կառանցալերկ զանգից», ճղճիմ նորաշաղակրատունքից, աւա՞ղ, անշատ սֆարթից...:

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

⁸ Փոխանորդը ՀԳՄ համագումարից յետոյ «Նորը» ամսագիր խմբագիրն էր: Կարելի է ասել՝ de jure: Բայց փաստացիօրէն (ոդ ֆակտո) «Նորը» հանդէսի խմբագիրը արձակագիր Ռ. Յովսեփեանն է: